


**ԱՄԲՈՂՋԱՆՈՒՄ Է ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՉԵՌԱԳՐԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Լրացավ աշխարհահռչակ գիտնական ու անվանի մանկավարժ, ՀՀ Ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Սորբոնի համալսարանի շրջանավարտ, Փարիզի Լեզվաբանական ընկերության անդամ, Չեխոսլովակիայի Արեւելյան գիտությունների ինստիտուտի թղթակից անդամ, իր գիտական գործերի հնգակի մրցանակակիր, Երեւանի պետական համալսարանի արեւելյան լեզուների ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հրաչյա Հակոբի Աճառյանի ծննդյան 130-ամյակը:



Իր ասկետիկ կյանքով ապրած 77 տարիներից 65-ը Աճառյանը նվիրաբերել է հայ գիտության ու մշակույթի զարգացմանը՝ ստեղծելով այնպիսի կոթողային աշխատություններ, որոնց նմանը դեռ չի ստեղծվել հայերենագիտության մեջ:

Ստոհիկյան մեղվաջանությամբ ստեղծած իր 250-ից ավելի աշխատությունների փոքր մասը հրատարակված տեսավ Աճառյանը: Դրանց թվում՝ իր «Անձնանունների բառարանի» 4 հատորները (հինգերորդը լույս տեսավ հետմահու՝ 1962 թ., ամբողջը՝ 3138 էջ), «Լիակատար քերականության» միայն 1-ին հատորը, «Հայոց լեզվի պատմության» 2 հատորները՝ 963 էջ, եւ բառաքննական ու բարբառագիտական աշխատանքներից մի քանիսը միայն:

Մեծ գիտնականի աշխատությունները սկսեցին պարբերաբար լույս տեսնել 50-ական թվականներից՝ իր շնորհալի սան ու

ասպիրանտ, հետագայում ակադեմիկոս Էդուարդ Աղայանի հոգատարությամբ ու խմբագրությամբ:

1954-1971 թվերին իրար հետեւից լույս տեսան «Լիակատար քերականություն հայոց լեզվի» (համեմատությամբ աշխարհի 562 լեզուների հետ) աշխարհում նմանը չունեցող աշխատության 7 հատորները (4-րդ հատորը՝ 2 մասով), 4946 էջ ծավալով:

1971-1979 թթ. ԵՊՀ-ն հրատարակեց նույնպես նմանը չունեցող քառահատոր «Արմատականը»՝ 2695 էջ ծավալով (այն ապակետիպ կազմում է 9000 էջ):

1984-ին լույս տեսավ Աճառյանի «Հայոց գրերը» կոթողային աշխատությունը:

Երկարատեւ լռությունից հետո՝ 2000 թվականներին, Աճառյանի նկատմամբ մեծ սեր ու համակրանք ունեցող բարերարների կողմից շարունակվեց նրա ձեռագրերի հրատարակությունը: Եվ դրա առաջին նախաձեռնողը եղավ «Հրաչյա Աճառյան» համալսարանի ռեկտոր, բ. գ. դ., պրոֆեսոր Ավագ Խաչատրյանը, որի հովանավորությամբ 2002 թվին հրատարակվեց «Հայ գաղթականության պատմություն» հանրագիտական բնույթի եզակի աշխատությունը՝ 766 մեծադիր էջերով, որի մաշված ու խունացած ձեռագրերը կորստից փրկեց ու հրատարակության պատրաստեց իր հորից ոչ պակաս ազգանվեր Քնարիկ Աճառյանը:

2003 թ. ամերիկահայ բարերար Հարություն Սիմոնյանի հովանավորությամբ Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը հրատարակեց Աճառյանի «Նամականին»՝ 312 էջ (նամակները հավաքել ու հրատարակության եւ պատրաստել Քնարիկ Աճառյանը եւ Մելանյա Եղիազարյանը):

2003 թ. Գալուստ Գյուլբենկյան հիմնարկի հովանավորությամբ ԵՊՀ-ի հրատարակչությունը լույս ընծայեց Աճառյանի «Կիլիկիայի բարբառը», որով գրեթե ամբողջացավ պրոֆեսոր Աճառյանի ուսումնասիրած հայերենի 31 բարբառների հարստությունը. հայ բարբառների ուսումնասիրությանը նրա նվիրած 15 աշխատությունների էջերի ընդհանուր քանակը անցնում է 6500-ի սահմանը:

Նույն հիմնադրամի միջոցներով 2004-ին լույս տեսավ Աճառյանի «Հայոց պատմություն՝ հյուսված ընդհանուր պատմության հետ» արժեքավոր մենագրությունը:

2005 թ. Երեւանի պետական համալսարանը նորից Գյուլբենկյան հիմնադրամի հովանավորությամբ հրատարակեց «Լիակատար քերականության» լրացուցիչ հատորը, որով ամփոփվում է այդ կոթողային աշխատության Աճառյանի նախատեսած ամբողջ նյութը: Այս հատորը պարունակում է իմաստաբանություն, բառաքննություն եւ շարահյուսություն բաժինները, որոնցից յուրաքանչյուրը Աճառյանի նախատեսածով պետք է մեկական հատորի նյութ դառնար, բայց պրոֆեսորի հիվանդության եւ տեսողության կորստի պատճառով այդ հատորները մնացին անավարտ: Այդ նյութերը մենք պրոֆեսոր Սերգեյ Գալստյանի հետ կարգի բերեցինք, խմբագրեցինք եւ հրատարակեցինք որպես լրացուցիչ հատոր:

Վերջերս ընթերցողի սեղանին դրվեց Հրաչյա Աճառյանի «Պարսից լեզվի պատմություն» ոչ մեծածավալ աշխատությունը, որը հրատարակության է երաշխավորել «Հրաչյա Աճառյան» համալսարանի գիտական խորհուրդը, հրատարակությունն իրականացրել է ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի նախարարությունը: Գրքի տեքստը պատրաստել եւ ծանոթագրել է Զնարիկ Աճառյանը, գիրքը խմբագրել է նույն համալսարանի արեւելագիտության եւ ռոմանագերմանական ֆակուլտետի դեկան, դոցենտ Վրեժ Փարսադանյանը:

Այս փոքրածավալ գիրքը (103 էջ), իհարկե, պարսից լեզվի պատմության ամբողջական քննությունը չէ. կազմված է առանձին դասախոսություններից ու հոդվածներից, որոնք ավելի շատ տեղեկություններ են տալիս պարսից ժողովրդի անցյալի ու նրա պատմության մասին:

3 մասից կազմված գրքի մասում Աճառյանը ներկայացնում է աշխարհի ժողովուրդների 1500 լեզուների դասակարգումը՝ դրանք խմբավորելով 17 լեզվաընտանիքի (լեզվաբուն) մեջ՝ նշելով դրանց աշխարհագրական տարածքն ու ազգակցական կապերը: Ասենք,

որ լեզվաբանական նորագույն տվյալներով՝ աշխարհի լեզուների թիվն անցնում է 2500-ից:

Գրքի երկրորդ մասում խոսվում է պարսկերենի 3 շրջանների, պարսկական բեւեռագրերի, քերականության, բառարանների, ինչպես նաեւ պարսկերենի հնդեվրոպական արմատների ծագման մասին, որոնց թիվը նա հասցնում է 1129-ի՝ հայերենի 730-ի դիմաց, որոնք աճած ձեւերով հասնում են մոտ 1000-ի:

Գրքի երրորդ մասը ուրվագիծ է պարսից ժողովրդի պատմությանը՝ սկզբնավորումից մինչեւ 1920 թ.:

Իհարկե, «Պարսից լեզվի պատմությունը» Աճառյանի անտիպ վերջին աշխատությունը չէ. նրա արխիվում պահպանվում են նաեւ այլ արժեքավոր ձեռագրեր, որոնց բարեհաճ հրատարակիչների նկատմամբ երախտապարտ կլինի հայերենագիտությունը եւ ամբողջ հայ ժողովուրդը:

ԽԱՉԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ,
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՎԱՐԱՋԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայրենի ճարտարապետության կազմավորման եւ զարգացման ուսումնասիրության ազգանվեր ու շնորհակալ գործում իր խոշոր եւ անուրանալի ավանդն ունի 95 տարին բոլորած դոկտոր պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Վարազդատ Մարտիրոսի Հարությունյանը:

Նա ծնվել է Վան քաղաքում եւ իր հազարավոր բախտակից հայրենակիցների հետ բռնել գաղթի ճանապարհը, ժամանակավորապես հաստատվելով Թիֆլիսում: Այստեղ ապագա գիտնականն ավարտել է միջնակարգ դպրոցը, ապա Երեւանում ընդունվել պոլիտեխնիկական ինստիտուտ, որը 1937 թ. գերազանց դիպլոմով ավարտել է եւ ստացել ճարտարապետի կոչում:

Դեռ ուսանողական տարիներին դրսևորվել են Վ. Հարությունյանի սերը եւ ձգտումը դեպի հայկական միջնադարյան ճարտարապետական հուշարձանների հետազոտումը: Դա 1939 թ. նրան բերեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական բաժնի ասպիրանտուրա, որն ավարտեց՝ գրելով եւ 1946 թ. պաշտպանելով թեկնածուական դիսերտացիա՝ «Դվինի ճարտարապետական հուշարձանները» թեմայով, որը հրատարակվեց առանձին գրքով 1950 թ.:

Չկտրվելով գիտական-հետազոտական եւ մանկավարժական գործունեությունից, Վ. Հարությունյանը 1945 թվականից դրանք զուգակցել է ճարտարապետական հաստատություններում ղեկավար աշխատանքի հետ: 1945-1951 թթ. նա գլխավորել է Հուշարձանների պահպանության կոմիտեն, միաժամանակ լինելով ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի ճարտարապետական գործերի վարչության պետի տեղակալ: Այս աշխատանքները նրա համար հնարավորություն ստեղծեցին հանգամանորեն ծանոթանալու Հայաստանի ճարտարապետական հուշարձաններին, ինչպես նաեւ հանրապետությունում նախագծման եւ շինարարության հարցերին: Վ. Հարությունյանի ծառայություններին պետք է վերագրել Հայաստանում հուշարձանների պահպանության ու վերականգնման, ինչպես նաեւ հաշվառման գործի կազմակերպումը գիտական հիմքերի վրա դնելը:

Վ. Հարությունյանը մոտ կես դար եղել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ամբիոնի վարիչը, առաջինն է մշակել հայկական ճարտարապետության եւ տեսության դասընթացների հիմունքները, մտցրել Հայաստանում խիստ անհրաժեշտ հուշարձանների վերանորոգման եւ վերականգնման գործի դասավանդումը, համապատասխան մասնագետներ պատրաստելով բացօթյա թանգարան մեր երկրի եւ սփյուռքի համար:

Իր հետազոտական աշխատանքի հենց սկզբից գիտնականը դրսևորեց իրեն ոչ միայն հայկական ճարտարապետության իսկական գիտակ, այլեւ, որը շատ կարեւոր է, իսկական հայրենասեր: Նրա «Արուճի տաճարի թվագրման առթիվ» 1946 թ.

ռուսերեն տպագրված աշխատանքը պատասխան էր Գ. Չուբինաշվիլու՝ հայկական մշակույթի հանդեպ կատարած ոտնձգություններին, որի համար այդ տարիներին քաղաքացիական խիզախություն էր պահանջվում:

Փորձ կուտակելով Հայաստանի ճարտարապետության քիչ ուսումնասիրված առանձին խնդիրների հետազոտության ասպարեզում, Վ. Հարությունյանը 1950 թ. Մոսկվայում (Ս. Սաֆարյանի հետ համատեղ) հրատարակեց «Հայկական ճարտարապետության հուշարձանները» գիրքը՝ հարուստ պատկերազարդումով եւ գիտական բարձր մակարդակով շարադրված:

Վ. Հարությունյանի գիտահետազոտական աշխատանքում արժեքավորն այն է, որ նա ուշադրություն է դարձնում հայկական ճարտարապետության չուսումնասիրված կամ քիչ ուսումնասիրված հարցերի վրա: Այնպիսի թեմաներ, ինչպիսիք են միջնադարյան Հայաստանի քաղաքաշինությունն ու աշխարհիկ ճարտարապետությունը, դարձան նրա երկարատեւ հետազոտությունների հիմնական բնագավառները, որոնց արդյունքները հեղինակը տպագրեց առանձին գրքերով եւ հոդվածներով: Այդ մենագրություններից «Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները» գիրքը եղավ ներդրում հայկական աշխարհիկ ճարտարապետության ուսումնասիրության գործում:

Վ. Հարությունյանի որպես գիտնականի նշելի գծերից է նաեւ այն, որ նա հիմնականում զբաղվելով Հայաստանի հին եւ միջնադարյան ճարտարապետության խնդիրներով, իր այդ աշխատանքն արդյունավետ զուգակցում է նաեւ հայկական ժամանակակից ճարտարապետության հարցերի հետազոտության հետ: Դրան են նվիրված ամսագրերում եւ թերթում լույս տեսած՝ Վ. Հարությունյանի հարյուրավոր հոդվածները, տպագրված գեկուցումները: 20-րդ դարի առաջին կեսի հայկական ճարտարապետությանն է վերաբերում նրա «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը» մենագրությունը, տպագրված 1955 թ. ռուսերեն, Վ. Հովհաննիսյանի

հեղինակացությամբ: Այս գիրքը եղավ Խորհրդային Հայաստանի ճարտարապետության կազմավորման ու զարգացման պատմական գործընթացի գիտական սիստեմավորման առաջին փորձը:

Վ. Հարությունյանի 1960-ական թթ. հետազոտությունների շարքում ամենանշանակալիցը «Քաղաքաշինությունը հին և միջնադարյան Հայաստանում» խոշոր մենագրությունն էր, որը հեղինակը 1964 թ. հաջողությամբ պաշտպանեց որպես դիսերտացիա Լենինգրադում եւ ստացավ ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան: Այս աշխատությանն է առնչվում նույն թվին տպագրված «Անի քաղաքը» գիրքը՝ նվիրված Հայաստանի երբեմնի մայաքաղաքին: Իսկ այսօրվա մայրաքաղաքին էր նվիրված 1968 թ. Մոսկվայում լույս տեսած «Երեւան» գիրքը (Մ. Հասրաթյանի եւ Ա. Մելիքյանի հեղինակությամբ), որում առաջին անգամ ներկայացվում էր Երեւանի ճարտարապետությունը քաղաքի հիմնադրումից մինչեւ նրա 2750-ամյա հոբելյանը:

Սփյուռքի հայությանը եւ ընդհանրապես արտասահմանյան ընթերցողին Հայաստանի ճարտարապետական ժառանգությանը ծանոթացնելու գործում խիստ կարեւոր էր 1975 թ., Մեծ եղեռնի 60-ամյակին Բեյրութում լույս տեսած Վ. Հարությունյանի «Հայաստանի յուշարձանները» (Մորուս Հասրաթյանի մասնակցությամբ) շքեղ պատկերազարդ գիրքը հայերեն, անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով:

1987 թ. Վ. Հարությունյանը հրատարակեց «Հին աշխարհի ճարտարապետությունը» ուսումնական ձեռնարկը՝ հիմնականում գրված արտասահմանյան ուղեւորությունների ժամանակ կատարած սեփական դիտարկումների հիման վրա: 1988 թ. նա տպագրեց «Եկայք շինեսցուք» գիրքը, նվիրված Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության տարիներին Էջմիածին Մայր աթոռի շինարարական գործունեությանը:

Վ. Հարությունյանի գրչին են պատկանում մի շարք հանրամատչելի գրքույկներ, նվիրված հայկական ճարտարապետական ժառանգության պահպանմանը, Թ.

Թորամանյանին, Էջմիածնի հուշարձաններին, Չվարթնոցին եւ այլն: Նա ակտիվորեն ե՛լ որպես հեղինակ, ե՛լ խմբագրական խորհրդի անդամ մասնակցում է հանրագիտարանների, Հայաստանի պատմությանը եւ ճարտարապետությանը նվիրված ակադեմիական բազմահատորյակների կազմմանը:

Վ. Հարությունյանի կեսդարյա ուսումնասիրությունների հանրագումարը եղավ 1992 թ. տպագրված «Հայաստանի ճարտարապետության պատմությունը» կոթողային մենագրությունը (գրքի ռուսերեն համառոտ տարբերակը՝ «Հայ ժողովրդի քարակերտ տարեգրությունը» խորագրով հրատարակվել է 1985 թ.:

Ուշագրավ է, որ վերջին տարիներին, երբ զգալի նվազել են հայագիտության բնագավառում նոր աշխատությունների ստեղծումը եւ նրանց հրատարակումը, Վ. Հարությունյանը կրկնապատկված եռանդով ու երիտասարդական ավյունով մեկը մյուսի հետեւից տպագրում է ինչպես գիտական ուսումնասիրություններ (օրինակ՝ «Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները»), այնպես էլ իր ուղեգրությունները, Հայաստանի վերջին կեսդարյա մշակութային կյանքի տարեգրությունը հանդիսացող հուշագրությունները: 1991 թ. նրան բախտ վիճակվեց լինել իր ծննդավայր Վանում, տեղում ուսումնասիրել հայկական ճարտարապետության գլուխգործոցներ Աղթամարի տաճարը, Անիի հուշարձանները, Կարսի եկեղեցին, Վարագավանքը, եւ իր դիտարկումները տպագրեց «Նախնեաց ոտնահետքերը» գրքում: Առանձնապես արգասավոր է Վ. Հարությունյանի գիտական գործունեության վերջին տասը տարին, որի ընթացքում նա գրեց եւ հրատարակեց 15 գիրք: Դրանց շարքում պետք է հատկապես նշել «Արվեստակից ժամանակակիցներս» (Երեւան, 2001 թ.) գիրքը, եւ մեծածավալ «Հայկական քաղաքաշինության եւ ճարտարապետության տեսության եւ պատմության հիմնախնդիրները» խորագրով ժողովածուն (Երեւան, 2004 թ.):

Վ. Հարությունյանը գիտահետազոտական եւ մանկավարժական բազմամյա գործունեությունը զուգակցում է հասարակական ակտիվ աշխատանքի հետ: Նշանակալից է նրա

ավանդը Հայաստանի ճարտարապետների միությունում՝ 1960-ական թթ. նա չորս անգամ անընդմեջ ընտրվել է միության վարչության նախագահ: Վ. Հարությունյանը Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության կամավոր ընկերության ստեղծման նախաձեռնողներից է ու 1977 թվականից մինչեւ օրս ընկերության հանրապետական խորհրդի նախագահը:

1979 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիան Վ. Հարությունյանին շնորհեց Թ. Թորամանյանի անվան մրցանակ՝ «Հայաստանի ճարտարապետությանը եւ տեսությանը նվիրված գիտահետազոտական նոր եւ մեծարժեք աշխատությունների համար»: Բեղմնավոր գիտական եւ հասարակական աշխատանքի համար Վ. Հարությունյանը պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով, արժանացել Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման, պարգևատրվել է «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Հայագիտության ասպարեզում ունեցած մեծ ավանդի ու բեղմնավոր աշխատանքի համար 1996 թ. պրոֆեսոր Վ. Հարությունյանը ընտրվեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս:

Այսօր էլ հայկական ճարտարապետության պատմության ու տեսության կենդանի դասական, ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանը եռանդով շարունակում է իր գիտական ու հասարակական արդյունավետ գործունեությունը, վայելելով ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան գիտական շրջանակների մեծ հարգանքը:

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ,

ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր,

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի

վարիչ

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՋՈՂԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ
ԿԱՅՔԷԶ**

«Շվեյցարիա-Հայաստան» ընկերակցության նախաձեռնությամբ եւ ժամ էքիյանի ջանքերով ստեղծվել եւ նոյեմբերի սկզբներից ինտերնետում գործում է www.InHomage.com կայքէջը, որը նոր երեւոյթ է հայ սփյուռքի պատմության մեջ: Կայքէջը նվիրված է Օսմանյան կայսրությունում 1915 թ. իրականացված Հայոց ցեղասպանության զոհերին: Կայքէջը բացվում է Փոքր Ասիայի 1920 թ. քարտեզով (ըստ Սելրի պայմանագրի), որտեղ երեւում են ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի ուրվագծած Հայաստանի սահմանները:

Նոր կայքէջը սփյուռքի մոտ 6,1 մլն եւ Հայաստանի 3,2 մլն հայերին հնարավորություն է տալիս քարտեզի վրա գտնել ցեղասպանության զոհ դարձած իրենց պապերի ծննդավայրերը եւ նրանց անունները գրանցել տվյալների գետեղարանում (base): Փարիզի «Աշխարհ» թերթը նշում է, որ երկրորդ ինտերակտիվ գործողությունը թույլ է տալիս ըստ շրջանների տեսնել զոհերի գրանցված անունները եւ կապ հաստատել նույն վայրից սերող, բայց աշխարհի մյուս ծայրին ապրող որեւէ ընտանիքի հետ: Չի բացառվում այս ձեւով ընտանիքի վերամիավորման հնարավորությունը:

www.InHomage.com կայքէջը պարունակում է նաեւ պատմական անձանց վկայություններ, Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների ու քաղաքների ցանկը, քաղվածքներ Սելրի պայմանագրից եւ այլ օգտակար տեղեկություններ: Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության բանակցությունների ծավալման ներկա պայմաններում նոր կայքէջն աշխարհից արդարություն պահանջելու հավելյալ հնարավորություն է ընձեռում:

**ՄԱՆԱՀԻՆՈՒՄ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՆՇՎԵՑ ԱՐՏԵՄ ՄԻԿՈՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ**

Նոյեմբերի 18-ին Սանահինում տեղի ունեցավ հռչակավոր ավիակոնստրուկտոր Արտեմ Միկոյանի 100-ամյակին նվիրված հանդիսություն:

Հանդիսությանը մասնակցելու համար մեծ ավիակոնստրուկտորի ծննդավայր էին ժամանել ՀՀ



պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը, Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, «ՄԻԳ» կորպորացիայի գլխավոր տնօրենի տեղակալ Անդրեյ Կարասելը, ՀՀ ՊՆ 3-րդ բանակային կորպուսի հրամանատարությունը, Ազգային ժողովի պատգամավորներ, գիտնականներ: Հանդիսությանը մասնակցելու էին եկել Արտեմ Միկոյանի որդին՝ «ՄԻԳ» կորպորացիայի փոխտնօրենի խորհրդական, ավիակոնստրուկտոր Հովհաննես Միկոյանը, դուստրը՝ Սվետլանան, Հովհաննեսի դուստրը՝ Կարինեն եւ Անաստաս Միկոյանի որդին՝ գեներալ-լեյտենանտ Ստեփան Միկոյանը:

Արտեմ Միկոյանի գործունեությունը ներկայացրեց Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Սամսոն Քառյանը:

Խոսք տրվեց Անդրեյ Կարասելին:

- ՄԻԳ-21 ինքնաթիռն ինժեներական բացառիկ տաղանդի արգասիք էր, որը բավականին ժամանակ մնաց անգերազանցելի, ասաց: Նրա ՄԻԳ-երը մեր բանակի հզորությունը հասցրին մի նոր մակարդակի, որին նախանձում էին հզոր տերությունները: Ես երախտապարտ եմ հայ ազգին, այս հրաշալի գյուղին, այս հողին, որ ծնել է համաշխարհային մեծության զավակ, որով կհպարտանան ապագա սերունդները նույնպես:

Հուզիչ էր Ստեփան Միկոյանի խոսքը.

- Ես այսօր եկել եմ հորս եւ հորեղբորս ծննդավայր Սանահին, որը համարում եմ իմ հայրենի գյուղը եւ որը նույնքան հարազատ է ինձ համար: Արտեմ Միկոյանի ղեկավարած կոնստրուկտորական բյուրոն այժմ էլ կրում է իր անունը, քանզի ինքնաթիռաշինության պատմության մեջ ՄԻԳ-երը բեկումնային փուլ նշանավորեցին: Շնորհակալությունս եմ հայտնում այն մեծարանքի համար, որին արժանացավ հորեղբայրս Հայաստանում:


Զինվորական օդաչու Սերգեյ Հակոբյանն իր ելույթում ասաց, որ թռել է 12 տիպի ինքնաթիռներով, այդ թվում՝ ՄԻԳ-երով: Նա պատմեց այն կարողությունների մասին, որ ունի կործանիչը եւ որն օգտագործվում էր ռազմական գործողությունների ժամանակ:

Միջոցառման հանդիսավոր մասի ավարտից հետո հյուրերն այցելեցին 1971 թ. հիմնադրված Անաստաս եւ Արտեմ Միկոյան եղբայրների թանգարան, ծանոթացան ցուցանմուշներին: Իսկ Անդրեյ Կարասեւը թանգարանին նվիրեց ՄԻԳ կործանիչների վերջին թողարկման մակետը:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

ՆԱ ԱՆԿԵՂԾՈՐԵՆ ՄԻՐՈՒՄ ԷՐ ԻՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Մոսկվայում դժբախտ պատահարի հետեւանքով զոհվեց միջուկային ֆիզիկայի ասպարեզի հայտնի գիտնական, ատոմային էլեկտրակայանների շահագործման համառուսաստանյան գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր տնօրեն, ՌԴ ԳԱ թղթակից անդամ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Արտավազդի Աբադյանը: Նրա հետ զոհվեց նաեւ կինը՝ Լիլի Պարույրի Աբադյանը, որը նույնպէս աշխատում էր նույն բնագավառում:



Պրոֆ. Աբադյանը ծնվել է Ստեփանակերտում: Ավարտելով Երեւանի Ձերժինսկու անվան միջնակարգ դպրոցը, ուսումը շարունակել է Մոսկվայի ինժեներաֆիզիկական ինստիտուտում: Հետագա նրա ողջ գիտական-աշխատանքային գործունեությունը կապված է եղել ատոմային էներգետիկայի հետ:

Պրոֆ. Աբադյանն անկեղծորեն սիրում էր իր հայրենիքը: Հայաստանի անկախությունից հետո սկզբունքորեն հանդես էր գալիս Մեծամորի ատոմակայանի վերագործարկման օգտին եւ հսկայական ավանդ ներդրեց այդ աշխատանքներում՝ գիտական թե գործնական: Ցավում էր, որ չհաջողվեց գործարկել նաեւ մյուս բլոկը: Ակտիվորեն համագործակցում էր հանրապետության ղեկավարության հետ: Մոսկվայի հայկական թերթերից մեկում ունեցած իր, ավա՛ղ, վերջին հարցազրույցում նա այսպէս է ներկայացրել իր հետեւողական դիրքորոշումը տվյալ խնդրի նկատմամբ:

«Շատ եմ ուզում, որ Հայաստանում բոլոր մակարդակներում հասկանան, թե որքան անհրաժեշտ է ատոմային էներգետիկան մեր մայր հայրենիքին: Հայաստանում չկա նավթ, գազ, ածուխ, հաղորդակցության առումով նա մեկուսացված է: Եվ այս պայմաններում մյուս էներգարտադրողներին հումք հասցնելը

վառելիքով անչափ դժվար է: Օրինակ, ատոմային էլեկտրակայանը վառելիքով լիցքավորվում է տարեկան մեկ անգամ: Ընդամին վառելիքը կարելի է հասցնել օդով: Խոսակցությունների ժամանակ ես ամեն կերպ խուսափում եմ քաղաքականությունից: Բայց ավելորդ չեմ համարում ասել, որ ԱԷԿ-ի առկայությունը երկրին տալիս է որոշակի (եթե կուզեք, «միջուկային տերության») կարգավիճակ», ընդգծել է Ա. Աբաղյանը:

Պրոֆեսոր Արմեն եւ տիկին Լիլի Աբաղյանների ողբերգական մահվան կապակցությամբ «Ազգ»-ի խմբագրությունը խորապես վշտակցում է Մոսկվայում թերթի հատուկ թղթակից Ռուբեն Չայրապետյանին եւ տիկնոջը:

Լեռնային Ղարաբաղի

«խաղաղ բռնագրաւումը» 1923-89 թթ.

65 տարում նախկին ինքնավար մարզում հիմնադրել են 36 ադրբեջանական գիւղեր

Ստեփանակերտցի քաղաքական վերլուծաբան Դաւիթ Բաբայեանը Լաչինի եւ յատկապէս Քելբաջարի շրջանը համարում է Ղարաբաղի եւ Չայաստանի անվտանգութիւնն ապահովող ամենակարեւոր տարածքներից: Բարձր լեռնային ռելիեֆը Քելբաջարը դարձնում է պաշտպանութեան համար շատ նպաստաւոր տարածք, սակայն, ըստ Բաբայեանի, այս շրջանի կարեւորութիւնը չի սահմանափակւում միայն դրանով: «Այստեղ են սկիզբ առնում Ղարաբաղի ամենախոշոր եւ Չայաստանի կարեւոր գետերը՝ Թարթառը, Խաչէնը, Արփան եւ Որոտանը: Նախկին ԼՂԻՄ-ի հիմնական գետերի միջին տարեկան հոսքը 942 մլն. խմ. է, որից 83 տոկոսը սկիզբ է առնում հենց Քարվաճառի շրջանում: Արփան եւ Որոտանը Սեւանայ լճի փրկութեան միակ երաշխիքն են: Եթէ այս տարածքն անցնի Ադրբեջանին, ապա վերջինս կը ստանայ Արցախի եւ Չայաստանի վրայ ճնշում գործադրելու շատ ուժեղ լծակ», - ասաց Բաբայեանը: Քաղաքական վերլուծաբանը մի ուսումնասիրութիւն է կատարել՝ անւանելով «ջրաժողովրդագրութիւն». ինչպէս էին Ադրբեջանի իշխանութիւնները ԼՂԻՄ-ի գոյութեան շրջանում նոր

ադրբեջանական գիւղեր հիմնում եւ հիմնադրման համար յատկապէս ինչին էին կարելուօրութիւն տալիս: Բաբայեանը պարզել է, որ 1923-89 թթ. Ղարաբաղում հիմնադրուել են 36 ադրբեջանական գիւղեր, որոնցից 30-ն ունեցել են ջրային-քաղաքական նշանակութիւն: Ադրբեջանի ներքգործնախարար Ռամիլ Ուսուբովը Ղարաբաղում Յէյդար Ալիեւի վարած քաղաքականութեան մասին ասել է. «Միայն Ալիեւի Ադրբեջանի ղեկավար դառնալուց յետոյ էին ղարաբաղաբնակ ադրբեջանցիներն իրենց զգում երկրամասի լիիրաւ տէրը: Այդ հանգամանքը հիմք եղաւ ԼՂ-ի յարակից՝ Լաչինի, Աղդամի, Ջեբրայիլի, Ֆիզուլու եւ այլ շրջաններից ադրբեջանցի բնակչութեան Ղարաբաղ ներհոսքի համար»:

Դաւիթ Բաբայեանը ասաց, որ ԼՂ-ի նկատմամբ Բաքուն խտրական քաղաքականութիւն էր վարում նաեւ մինչեւ Ալիեւի իշխանութեան գալը: «ԼՂԻՄ-ի շրջկենտրոնները միմեանց կամ մայրաքաղաք Ստեփանակերտին կապող կարելու ռազմավարական ճանապարհներն անցնում էին յարակից ադրբեջանական շրջաններով, կամ ԼՂԻՄ-ի ներսի ադրբեջանական բնակավայրերով: Սակայն ադրբեջանական նոր գիւղերի հիմնադրումն ունէր ոչ միայն ռազմավարական կարելու հաղորդակցութիւնների վերահսկողութեան իրականացման, այլեւ՝ ջրաքաղաքական լուրջ նշանակութիւն», -

1989 թ. տւեալներով՝ Ասկերանի շրջանում գիւղերի թիւը 49 էր, որոնցից 38-ը՝ հայկական, 10-ը՝ ադրբեջանական, իսկ Դաշքուլաղը (Աստղաշէն)՝ խառը բնակչութեամբ: Ադրբեջանական բոլոր 10 գիւղերն էլ ունէին ջրային քաղաքական կարելու նշանակութիւն: Նոյն պատկերն էր Մարտակերտի շրջանում: 1989 թ. տւեալներով՝ շրջանն ունէր 56 գիւղ, որից 43-ը՝ հայկական, 10-ը՝ ադրբեջանական, իսկ 2 գիւղ՝ հայ-յունական եւ հայ-ռուսական: Ադրբեջանական բոլոր 10 գիւղերն էլ գտնուել են գետերի ակունքների վրայ: Բաբայեանը դիտել է տալիս, որ Մարտունու շրջանում 1926 թ. կար ընդամենը 1 ադրբեջանական գիւղ՝ Ղարադաղլուն 97 բնակչով, իսկ 1989 թ. տւեալներով՝ նրանց թիւը հասնում էր 1074-ի, այդ տարիներում շրջանում հիմնուում են եւս 4 ադրբեջանական գիւղեր: Շուշիի շրջանում, 1989-ի տւեալներով, կային 27 գիւղական բնակավայրեր, որոնցից 5-ը՝ հայկական, միւս 22-ը՝ ադրբեջանական, ընդորում ադրբեջանական 19 գիւղ հիմնադրուել է 1920-ական թթ. յետոյ:

Բաքւի իշխանութիւնները, ըստ Բաբայեանի, իրականացնում էին հայկական գիւղերի «խաղաղ բռնագրաւում», այսինքն՝ հայկական այս կամ այն գիւղում մշտական բնակութիւն էին հաստատում 1 կամ մի քանի ադրբեջանական ընտանիքներ: «Որոշ ժամանակ անց

այնտեղ վերաբնակեցում էին եւս մի քանի ընտանիքներ, եւ գիւղը վերջնականապէս վերածուում էր ադրբեջանականի: Նման ճակատագիր ունեցաւ հայկական Խոջալու գիւղը: 1926 թ. մարդահամարի տւեալներով՝ Խոջալուն մաքուր հայկական գիւղ էր, որտեղ ապրում էին 888 հոգի: 60-ականների սկզբներում հայկական Խոջալուի կողքին երեւան եկաւ ադրբեջանական Խոջալուն: 1989-ին Խոջալուն զուտ ադրբեջանական էր՝ 1661 բնակիչներով», - ասաց նա: Բաբայեանի կարծիքով՝ Բաքուն ակտիւ ժողովրդագրական քաղաքականութիւն էր իրականացնում ոչ միայն ԼՂԻՄ-ում, այլ յարակից Քելբաջարի եւ Լաչինի շրջաններում՝ բացարձակ ժողովրդագրական վերահսկողութիւն հաստատելով Հագարու գետի եւ նրա վտակների, ինչպէս նաեւ՝ Թարթառ եւ Խաչէն գետերի ու նրանց վտակների վրայ: Աւելորդ չէ յիշեցնել, որ նախքան ԼՂԻՄ-ի ձեւաւորումը Հայաստանն ու Ղարաբաղն ունեցել են ընդհանուր սահման, եւ միայն 20-ական թթ. է ձեւաւորուել այսպէս կոչուած Լաչինի 7 կմ.-անոց միջանցքը, որը Հայաստանը բաժանում էր Ղարաբաղից: 1918 թ. տւեալներով՝ Լաչինի շրջանի տարածքում մնացել էին մի քանի հայաբնակ գիւղեր: Այսպէս՝ 1918 թ. Հակ գիւղում ապրում էին 811 հայեր, որոնք դուրս են քշուել գիւղից: 1926 թ. տւեալներով՝ Մինքենդի վերանուանուած Հակում բնակչութիւնը կազմում էր 751 հոգի, որոնցից միայն 5-ն էին հայ, մնացածը քրդեր էին: Շուտով քրդերը եւս «անհետացան»: 80-ական թթ. տւեալներով՝ Մինքենդի բնակչութիւնը մաքուր ադրբեջանական էր եւ հասնում էր 2306-ի: Բաբայեանն ասում է, որ Բաքւի իշխանութիւնների ռազմավարութիւնը Քելբաջարի եւ Լաչինի շրջաններում ուղղուած էր Թարթառ եւ Խաչէն գետերի ու նրանց վտակների աւազանի բնակեցմանը: «Ադրբեջանը յատկապէս առաջնահերթ նշանակութիւն էր տալիս ջրային զարկերակների ակունքներում նոր բնակավայրերի հիմնադրմանը: Դա հնարաւորութիւն էր տալիս հարկ եղած դէպքում վնասարար ներգործութիւն ունենալ ստորին հոսանքներում գտնուող հայկական բնակավայրերի վրայ: Ջրաժողովրդագրական քաղաքականութեան արդիւնքում ադրբեջանցիները մինչեւ 1989 թ. բացարձակ վերահսկողութեան տակ առան Թարթառ եւ Խաչէն գետերի ակունքներն ու վտակները», - ասաց նա:

Թ. Յ.

Ստեփանակերտ-Երեւան
Հայաստանեան մամուլ